Peacebuilding through Capacity Enhancement and Civic Engagement

European Union Initiative

international alert

EURASIA PARTNERSHIP FOUNDATION

Press Coverage

"Consequences: Artefact" film screening and exhibition

February 8, 2020
Yerevan, Moscow Cinema & Artists Union of Armenia

Table of Contents

Electronic media (in Armenian) 3
1lurer.am (Public TV online website) 3
Kentron.tv 3
Hayknews.com 5
AR tv Azdarar 6
Armenian Public TV 7
Armenia TV News 8
Shoghakat TV Company 9
Sputnik Armenia 10
Hraparak 11
Hetq 13
Electronic media (in English) 21
The Guardian 21
LensCulture 22
CIVILNET 23

Electronic media (in Armenian)

1lurer.am (Public TV online website)

Published on February 8, 2020

https://www.1lurer.am/hy/2020/02/08/%C2%AB%D5%80%D5%A5%D5%BF%D6%87%D5%A1%D5%B6%D6%84%D5%A8%D5%9D-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A5%D6%86%D5%A1%D5%AF%D5%BF%C2%BB-%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AE%D5%B6-%D5%B8%D6%82-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B6-%D6%86%D5%AB%D5%AC%D5%B4%D5%A8/188000

«Հետևանքը՝ արտեֆակտ» նախագիծն ու համանուն ֆիլմը

Արվեստագետ Էդիկ Պողոսյանն ու լուսանկարիչ Ալեն Բալայանը ներկայացնում են «Հետևանքը՝ արտեֆակտ» նախագիծն ու ֆիլմը, որի փակ դիտումն էր կազմակերպվել այսօր: Ինչպե՞ս է ընկալվում պատերազմն այս արվեստագետների դիտանկյունից, ի՞նչ ասել է՝ հետևանք:

Kentron.tv

Published on February 8, 2020

http://kentron.tv/news/23146.html

«Հետևանքը՝ արտեֆակտ». նախագիծը, որը ներկայացնում է պատերազմի հետքերը



Նկարիչների միությունում բացվել է «Հետևանքը՝ արտեֆակտ» խորագրով ցուցահանդեսը, «Մոսկվա» կինոթատրոնում էլ ցուցադրվել է համանուն ֆիլմը: Թե՛ ցուցահանդեսի և թե՛ ֆիլմի միջոցով հեղինակները փորձել են պատերազմը ներկայացնել այլընտրանքային տեսանկյունից՝ ցույց տալ ոչ թե դրա քաղաքական կամ սոցիալ-տնտեսական կողմը, այլ դրա հետևանքը: Ցուցահանդեսը բաց կլինի մինչև փետրվարի 28-ը:

Hayknews.com

Published on February 8, 2020

https://www.hayknews.com/2020/02/09/234608-%D6%83%D5%BF%D6%80-2020-%D5%B0%D5%A5%D5%BF%D6%87%D5%A1%D5%B6%D6%84%D5%A8%D5%9D-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A5%D6%86%D5%A1%D5%AF/



«Հետևանքը՝ արտեֆակտ» նախագիծն ու համանուն ֆիլմը

Արվեստագետ Էդիկ Պողոսյանն ու լուսանկարիչ Ալեն Բալայանը ներկայացնում են «Հետևանքը՝ արտեֆակտ» նախագիծն ու ֆիլմը, որի փակ դիտումն էր կազմակերպվել այսօր: Ինչպե՞ս է ընկալվում պատերազմն այս արվեստագետների դիտանկյունից, ի՞նչ ասել է՝ հետևանք: Դիտեք տեսանյութում:

AR tv Azdarar

Published on February 8, 2020

https://www.youtube.com/watch?v=JgwOUzJqTT0



Հետևանքը՝ արտեֆակտ

Նկարիչների միությունում տեղի է ունեցել ՝Հետեւանքը՝ արտեֆակտ՝ ցուցահանդեսը, իսկ Մոսկվա կինոթատրոնում՝ համանուն ֆիլմի փակ ցուցադրությունը: Քանդակ, լուսանկարչություն եւ ֆիլմ. 3 տարբեր մասերից բաղկացած նախագծի վրա հեղինակներն աշխատել են մոտ մեկ տարի: Առաջիկայում ստեղծագործական թիմը մտադիր է ֆիլմը ներկայացնել նաեւ դրսի հանդիսատեսին:

Armenian Public TV

Published on February 10, 2020

https://www.youtube.com/watch?v=pR9se7dLrKI

Առավոտ լուսո հարցազրույց. Էդիկ Պողոսյան, Արեգ Բալայան

Armenia TV News

Published on 8, 2020

https://www.armeniatv.am/hy/78762-78762

Ցուցահանդեսում ներկայացված է 7 ծավալային աշխատանք և 10 ֆոտոպատմություն: Նախագծի հերոսները և նյութերը պատերազմի վկաներն են:



Հետևանքը՝ Արտեֆակտ. Ցուցահանդեսը Նկարիչների միությունում բաց կլինի մինչև փետրվարի 28-ը

Ցուցահանդեսում ներկայացված է 7 ծավալային աշխատանք և 10 ֆոտոպատմություն: Նախագծի հերոսները և նյութերը պատերազմի վկաներն են: Արարատ Շահբազյանի կեսդարյա պայքարի 4 տարիները անցել են պատերազմի դաշտում: 50 -ամյա ստեփանակերտցին Արցախյան պատերազմի մասնակից է ու դրա հետևանքները կրողը: Արարատը մարտի դաշտում վիրավորվել է 3 անգամ: Արարատ Շահբազյանը՝ Հետևանքը արտեֆակտ նախագծի հերոսներից է: Նախագիծը իրականացրել են լուսանկարիչ Արեգ Բալայանը և արվեստագետ Էդիկ Պողոսյանը: Հեղինակները փորձել են հակամարտությանը նայել արվեստի տեսանկյունից: Ցուցահանդեսում ներկայացված է 7 ծավալային աշխատանք և 10 ֆոտոպատմություն: Նախագծի հերոսները և նյութերը պատերազմի վկաներն են:

Նախագծի առաջին ցուցադրությունը կայացել է Արցախում: Այն իրականացնելու գաղափարը ծնվել է 3 տարի առաջ: Նախապատրաստական աշխատանքները տևել են կես տարի: «Հետևանքը Արտեֆակտ» նախագծով նկարահանվել է նաև համանուն ֆիլմ: Երևանյան ցուցահանդեսը Նկարիչների միությունում բաց կլինի մինչև փետրվարի 28-ը:

<u>Shoghakat TV Company</u>

Published on 10, 2020

https://www.youtube.com/watch?v=tnxI26yHbHU

Sputnik Armenia

Published on February 12, 2020

https://m.armeniasputnik.am/video/20200212/22029115/Artefakt-hetevanqi-hetevanqy.html

Sputnik Արմենիայի «Արտբոքս» հաղորդաշարի եթերում արվեստագետ Էդիկ Պողոսյանը, լուսանկարիչ Արեգ Բալայանը և ռեժիսոր Հրայր Սարգսյանը խոսել են «Հետևանքը՝ արտեֆակտ» բազմաբնագավառ ցուցահանդեսի մասին, որն առաջարկում է հակամարտությունը քննել այլընտրանքային տեսանկյունից:



Ցուցահանդեսի նախաձեռնողները՝ Էդիկ Պողոսյանը և Արեգ Բալայանը, փորձել են ի ցույց դնել ոչ թե քաղաքական, տնտեսական կամ սոցիալական հետևանքները, այլ շփման գծի մերձակայքում առկա հետքերը, գտնել և ընտրել հակամարտության հետ կապված նյութական վկայություններ և դրանք վերափոխել արվեստի գործերի:

Խնդիր է դրվել մի դեպքում առանձնացնել առարկայի ինքնուրույն գոյությունը անձնական պատմությունից (հակամարտության իրեղեն հետքերի օբյեկտ–ինստալացիա), մյուս դեպքում միահյուսելու առարկա-մարդ անկախ գոյությունները (լուսանկարչական շարք): Նախագծի ընթացքում հայեցողաբար աշխատող տեսախցիկը արձանագրել է ոչ միայն նախագծի մասնակիցների աշխատանքը, այլև վերականգնել մարդկանց և միջավայրի փոխհարաբերությունները:

Ցուցահանդեսը մեկնարկել է փետրվարի 8-ին Հայաստանի նկարիչների միությունում և կգործի մինչև փետրվարի 28-ը:

Hraparak

Published on February 14, 2020

https://hraparak.am/post/a4ae78e8dd04b17e0d9cb1a577b9edd6

«Հետևանքը՝ Արտեֆակտ». Պատերազմի Շարունակությունը

Օրեր առաջ տեղի ունեցավ «Հետեւանքը՝ արտեֆակտ» բազմաֆորմատ նախագծի ներկայացումը, որը նախ մեկնարկեց «Մոսկվա» կինոթատրոնում, ապա շարունակվեց Նկարիչների միությունում: Նախագիծը փորձ է՝ առաջարկելու այլընտրանքային տեսանկյունով քննել հակամարտությունը՝ ի ցույց դնելով ոչ թե քաղաքական, տնտեսական կամ սոցիալական հետեւանքները, այլ շփման գծին մերձ տարածքում առկա հետքերը: Իրականացնողներն արվեստագետ Էդիկ Պողոսյանն ու լուսանկարիչ Արեգ Բալայանն են, ովքեր հակամարտության հետ կապված նյութական վկայություններն ամիսներ շարունակ հավաքել եւ վերափոխել են արվեստի գործերի:

«Հետեւանքը՝ արտեֆակտ» նախագիծն իր մեջ 3 բաղկացուցիչ տարր ունի՝ ինստալյացիաներ, լուսանկարներ եւ ֆիլմ (ռեժիսոր՝ Հրայր Սարգսյան), որի դիտմանը ներկա էր երկրի թե՛ մշակութային, թե՛ քաղաքական վերնախավը՝ ի դեմս ԱԺ պատգամավորների եւ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի, ով 25 րոպե սպասեցնել տվեց ներկաներին:

Դոկումենտալ ժանրում նկարված ֆիլմը, ըստ էության, ֆիլմ է ֆիլմի մասին, թե ինչպես ծնվեց ու հաստատվեց այս գաղափարը, որը միաժամանակ ցույց է տալիս նաեւ լուսանկարների եւ ինստալյացիաների ստեղծման խոհանոցը:

Ֆիլմի 10 հերոսները ներկայացվում են մետաղի ջարդոնների ֆոնին: Նրանք բոլորը տուժել են պատերազմից՝ կորցնելով աչքը, թեւը, ոտքերը, առողջությունը, ավելին՝ նրանք էլ «մետաղի ջարդոններ» են, ովքեր չունեն անուն, ազգանուն, հասցե: Նրանք պատերազմի կենդանի արտեֆակտներն են, ովքեր, սակայն, չեն խոսում առաջին դեմքից. նրանց մասին պատմում է լուսանկարիչ Արեգ Բալայանը՝ հուզական ու երբեմն էլ կենցաղային մակարդակում. «կայֆ տիպ ա», «հետաքրքիր աղջիկ ա»: Մի պահ թվում է՝ անփութություն է, որ մոռացել են էկրանին ավելացնել հերոսների անուն-ազգանունները, տարիքը, ընդհանրապես՝ նկարահանումների տեղանքը, բայց Նկարիչների միությունում ծանոթանալով հերոսներից յուրաքանչյուրի ֆոտոպատմությանը, որտեղ միտումնավոր ջնջված են նրանց անուն-ազգանունները, հասկանում ես, որ նրանք ոչ թե հերոսներ են, ովքեր ունեն անուն-ազգանուն, հասցե, այլ՝ արտեֆակտներ, ինչպես որ նախագծի հեղինակները՝ Արեգ Բալայանը, ով մասնակցել է ապրիլյան պատերազմին, եւ Էդիկ Պողոսյանը, ով Իրան-իրաքյան պատերազմի վկա է: Նրանք ունեն սեփական փորձառությունը, անձնական հիշողությունը, պատերազմը հետեւանքներ է թողել նաեւ նրանց ներսում: Դրա մասին նրանք աստիճանաբար բացվում են ֆիլմում:

Արեգ Բալայանը, օրինակ, ասում է, որ պատերազմն արթնացրել է իրեն, որտեղ ցավալիորեն հասկանում ես, որ մարդկային տեսակետից դու արժեք չես ներկայացնում, որովհետեւ պատերազմում քեզ չեն ճանաչում որպես մասնագետի կամ ընտանիքի հոր: Պատերազմի ժամանակ է, որ «ես»-դ մաքրվում է, եւ վերադառնում ես նախասկիզբ՝ այնպես, ինչպես ծնվել ես. «Եթե չլիներ այդ զրոյացումը, եթե դու չդառնաս ոչինչ, չես էլ հասկանա, որ հենց այդ ոչինչն է ամեն ինչը: Ես այդ կետում եղա, ու քիթս կպավ այդ ոչնչին, ուղղակի դրա գինն է շատ թանկ»: Պատերազմը բոլոր ժամանակներում ֆետիշացրել են՝ գրքերում, բանաստեղծություններում, երգերում, ֆիլմերում, որին ակամայից մասնակցում են նաեւ իրենք՝ հեղինակները. «Ծնվում ենք, ու մեզ արդեն սկսում են պատերազմ սովորեցնել, մենք էլ արդեն փոքրուց երազում ենք այդ պատերազմի մեջ լինել, որովհետեւ պատերազմի ժամանակ են հերոսանում, պատերազմի ժամանակ ես ամենակարեւորը լինում,- ասում է ֆիլմում Արեգը:- Խելագարվելու էսթետիկ բան է պատերազմը, այ, էդ ֆենոմենալ բանն է՝ ոչ մեկս չենք ուզում պատերազմ, բայց մեր ուշքը գնում է պատերազմի համար»:

Լուսանկարներն իրենց էսթետիկայով, մատուցման ձեւով սիրուն են, բայց «սիրուն»-ն այս դեպքում չի նշանակում ոչ հավաստի, կեղծ, արհեստական, ճիշտ հակառակը՝ կենդանի դիալոգի մեջ են մտնում հետդ, որովհետեւ դրանք որքան պատերազմի մասին են, նույնքան էլ՝ կյանքի:

Էդիկ Պողոսյանի համար, ում մոտ գաղափարը ծնվել է դեռ 2-3 տարի առաջ, սա փորձ էր ու հնարավորություն՝ ներկայացնել հակամարտությունն առհասարակ, ոչ միայն ղարաբաղյանը, այլեւ դրա հիման վրա՝ համամարդկային կոնֆլիկտը՝ մարդ-պատերազմ հարաբերության մեջ: Ֆիլմում Էդիկը խոստովանում է՝ պատերազմն իր մեջ դեռ չի ավարտվել, ու դրա հետ որքան դժվար է ապրելը, նույնքան բարդ է նաեւ խոսելը, բայց անհրաժեշտ է նաեւ կիսվել, հենց թեկուզ քեզ համար: Նա գնում է այդ քայլին եւ սկսում հավաքել պատերազմի մասին վկայող

ցանկացած կենցաղային իր, ջարդոն, որոնք արդյունքում դարձնում է ինստալյացիաներ. «Սովորական դարձած հետեւանքի դիրքից փորձում եմ բարձրացնել եւ բերել ներկայացնել դրանք որպես արտեֆակտ, որին նորովի մարդիկ կնայեն, եւ գուցե ինչ-որ չափով հաղթահարվի ինչ-որ բան,- ասում է Էդիկը, ով, ինչպես ինքն է նկատում, չի փորձել գեղարվեստականացնել մետաղական ինստալյացիաները։- Իրանք հենց այդ պատմությունն են, նաեւ՝ պատերազմն ու շարունակությունը կյանքի»:

Ֆիլմի վերջում Էդիկն անկեղծանում է. հիմա արդեն, երբ նախագիծն ավարտին է հասցրել, չգիտի՝ իր ներսի «բացերի» հետ սեփական հաշիվները մաքրե՞ց, թե՞ ոչ, իսկ կարո՞ղ է նաեւ նոր «բացեր» ստեղծվեցին. «Այլեւս չեմ ուզում, որ «հետեւանքը» լինի պարզապես հետեւանք, ուզում եմ այն գա առաջին պլան, ինչպես որ ժամանակին կանգնել է ճակատի ամենաառաջնային գծում՝ կրելով պատերազմի հետքերն իր վրա»:

«Հետեւանքը՝ արտեֆակտ» նախագծի հանրային ցուցադրությունից հետո տարբեր կարծիքներ եղան՝ թե՛ դրական, թե՛ բացասական, ու լավ է, որ եղան։ Դա նշանակում է, որ ասելիքն անձնապես հուզել է բոլորին, խոսակցության համար թեմա բացել, մի բան, որ վերջին տարիներին գրեթե չի հաջորդում որեւէ ֆիլմի, ցուցահանդեսի կամ ներկայացման։ Ի դեպ, ֆիլմը շարունակվում է ցուցադրվել «Մոսկվա» կինոթատրոնում (փետրվարի 14, 15), իսկ ցուցահանդեսը բաց կլինի Նկարիչների միությունում մինչեւ փետրվարի 28-ը:

Hetq.am

Published on February 15, 2020

https://hetq.am/hy/article/113371

Գեղեցիկն ու սարսափելին՝ մեկտեղված

Արեգ Բալայանի և Էդիկ Պողոսյանի՝ «Հետևանքը՝ արտեֆակտ» նախագծի առթիվ
Վերջին ամսվա ամենաքննարկվող ու հանրաճանաչ երևույթը Հայաստանի ժամանակակից արվեստում դարձավ լուսանկարիչ Արեգ Բալայանի և արվեստագետ Էդիկ Պողոսյանի՝ արցախյան պատերազմի ցավալի հետևանքները բացահայտող՝ «Հետևանքը՝ արտեֆակտ» համատեղ նախագիծը, որը բաղկացած է ֆիլմից և ֆոտոցուցահանդեսից: Նախագիծն ինքնին անասելի հուզական է ու հոգեմաշ, բայց և վեր է հանում քաղաքական և մշակութային-քաղաքակրթական, էթիկական, գեղագիտական, սոցիալ-հոգեբանական խնդիրներ:

Էդիկը դեգերում է հետպատերազմյան սահմանամերձ տարածքներով ու հավաքում հակառակորդի կրակոցներից ու ռմբակոծություններից քրքրված, մետաղյա ջարդոնների վերածված զանազան առարկաներ, կահկարասի: Դրանք՝ իբրև մարդու գործունեության արգասիքներ, միանգամայն համապատասխանում են «արտեֆակտ» սահմանմանը, առավել ևս, որ նախագիծը նաև «հնագիտական» բաղադրիչ ունի. արվեստագետը պեղում է ոչ հեռու անցյալի փլատակներն ու գտնում արտեֆակտեր: Իբրև մարդու գործունեություն է հասկացվում ոչ միայն խաղաղ աշխատանքը, որի ընթացքում արտադրվել են այս կամ այն առարկաները, այլև պատերազմը, որի հետքերն այդ առարկաներն իրենց վրա են կրում: Արեգը նույն այդ տարածքներում գտնում է պատերազմից ֆիզիկապես տուժած, կյանքի բնականոն ընթացքից, տնից, անգամ՝ սեփական լեզվից ու ինքնությունից զրկված մարդկանց: Էդիկը բզկտված ջարդոններից կերտում է ինստալացիաներ, իսկ Արեգը դրանց ֆոնին կամ դրանք ձեռքն առած՝ լուսանկարում է պատերազմից տուժած մարդկանց: Քրքրված առարկա– քրքրված մարմին– քրքրված կյանք ու հոգի: Անշունչ արտեֆակտ և մարդկային ճակատագիր, որոնք կապված են միմյանց հետ:

Ֆիլմը բազմաշերտ է: Առաջին հայացքից այն նկարագրում է պրոյեկտի կայացման ընթացքը, իսկ այդ ընթացքը դյուրին չէ թե՛ ֆիզիկապես (մետաղյա ջարդոն հայթայթել, հավաքել-բերել, կռել-մոնտաժել), թե՛ բարոյապես, էթիկապես ու հոգեպես (անդամալույծ մարդկանց հետ լեզու գտնել, իրենց հետ խոսել կնճռոտ թեմայի շուրջ, համոզել, որ ցույց տան սպիները, պրոթեզները կամ մարմնի վնասված հատվածները, գրի առնել իրենց պատմությունները, քանի որ այս տեսակի լուսանկարն առանց գրավոր պատմության համր է)… Մարդու ամենացավոտ տեղերին դիպչելը… Արվեստագետն ունի՞ արդյոք այդ իրավունքը: Կամ միգուցե հակառակը՝ նա ինչ-որ տեղ սփոփիչ դե՞ր է կատարում…

Ֆիլմի մյուս շերտն այն է, թե ինչպես են Արեգն ու Էդիկը, գործին զուգահեռ, իրենք արտահայտվում իբրև խոստովանանք, պատմում իրենց ապրումները ու պատերազմի մասին իրենց մտքերը, չէ՞ որ իրենք նույնպես իրենց հոգիներում կրում են պատերազմի հետևանքները… Երբեմն ցնցող ճշմարտություններ են ասում: Էդիկը փոքր էր, երբ ականատես է եղել իրան-իրաքյան հակամարտությանը: Իսկ քառօրյա պատերազմի մասնակից արցախցի Արեգը՝ ստեղծագործ երիտասարդ, ընտանիքի հայր, լեզուս չի պտտվում ասել՝ կարող էր չվերադառնալ ու շատ լավ էր դա գիտակցում… Իսկ այնտեղ, խրամատներում, նա կորցնում ու միևնույն ժամանակ վերագտնում է ինքն իրեն, որովհետև այնտեղ, ասում է նա, դու ոչինչ ես, դու զրո ես, դու լուսանկարիչ Արեգը չես, դու բոլորին հավասար կենաց պայքար մղող մարտիկ ես, քո ողջ էությունը կուտակվում է այդ մի կետի մեջ… Սովորաբար, լուսանկարչի և լուսանկարվողի միջև առկա է լինում պատնեշ, լուսանկարվողը միշտ կրավորական դիրքում է լինում, բայց այս նախագծի առանձնահատկությունն այն է, որ այդ պատնեշը չկա, որովհետև պատերազմի բովով անցած Արեգը վաստակել է այդ մարդկանց նկարելու իրավունքը: Ֆիլմում ցուցադրվող լուսանկարահանման ընթացքում պատմվում է հերոսների մասին: Պատմվում է լակոնիկ, կցկտուր, իրենց անմիջական երկխոսությունների միջոցով… Ու նրանք աչքիդ առջև դառնում են հերոսներ, և դու ապրումակցում ես իրենց ու ամաչում քո խղճուկ ու ճղճիմ պրոբլեմներից: Ի դեպ, ֆիլմի դիտումից առաջ մի պաշտոնյա իր խոսքում ասաց, որ այդպես կլինի դիտողի հետ, ասաց՝ կատարսիս կապրեք…

Կա նաև երրորդ շերտը՝ ամենաանտեսանելին: Այն է, թե ինչպես է օպերատոր Հրայր Սարգսյանը նկարահանում այդ ամենը, ու կարծես Էդիկի ու Արեգի նկատմամբ կատարում նույնն, ինչ իրենք՝ պատերազմից տուժած իրենց հերոսների. նա ոչ միայն վավերագրում է նախագծի ստեղծման գործընթացը, այլև, թիրախավորելով հեղինակներին իր տեսախցիկի ոսպնյակում՝ ստիպում կամ օգնում, որ իրենք էլ խոսեն, արտահայտվեն…

Ասում են, ինչ-որ քննադատություններ են հնչել այն առթիվ, թե մարդկային ցավն ու պատերազմի պատճառով խեղված մարմիններ ցուցադրելը լավ չի: Այդուհանդերձ, նախագիծը

բարձր է գնահատվել հեղինակավոր մասնագետների ու լայն հանրության կողմից: Հեղինակներն, անկասկած, հասել են իրենց նպատակին՝ իրենք ցույց են տվել կամ, ինչպես էդիկն է ասում՝ առաջին պլան մղել, պատերազմի հետևանքները և դեռ ավելին: Այդ ավելինի մասին եմ ուզում խոսել: Խնդիրը լուրջ է ու խորը, թեպետ հին է նույնքան, որքան երկրագնդի վրա կան պատերազմն ու արվեստը: Խոսքը արվեստում մարդկային վերքն ու ցավը, դաժանությունն ու սարսափը ցույց տալու թույլատրելի սահմանի մասին է: Սա հաստատում է արվեստի ուժն այնտեղ, ուր այն, թվում է, տեղ չունի՝ պատերազմի ու իր սարսափելի հետևանքների մեջ: Բանն այն չէ պարզապես, որ նախագիծը հանրությանը կարեկցանքի ու բարության դարձի է բերում և կամ խաղաղության կոչ անում հակամարտող կողմերին. դա ինքնըստինքյան ենթադրվում է: Լուսանկարչությունը գեղանկարչությունից տարբերվում է իր վավերագրական-ռեպորտաժային, դեկլարատիվ «ռեալիթի»-ով, ինչի շնորհիվ սառը ցնցուղի էֆեկտն այս պարագայում առավել է, քան գեղանկարչության մեջ: Սակայն, այդուհանդերձ, լուսանկարչությունը վաղուց արդեն վաստակել է իր ինքնուրույն ու ինքնաբավ գեղագիտական-գեղարվեստական նշանակությունը: Այո, հեղինակները համարձակվել են արվեստի դաշտ բերել սարսափելին, ցավը, խեղումը, տրավման ու այդպիսով, գուցե ակամա, դիպչել սարսափելիի ինքնաբավ գեղեցկության հարցին:

Սարսափների և հետտրավմատիկ ապրումների ներքո են ընթացել երկու համաշխարհային պատերազմները, նացիստական վայրագությունները տեսած 20-րդ դարի արևմտյան արվեստը, այդ թվում՝ լուսանկարչությունը: Պիկասոյից մինչև Բոյս և Կիֆեր, «կորուսյալ սերնդից» մինչև «վիետնամական սինդրոմ» տրավմայի թեման կարմիր թելով անցնում է 20-րդ դ. արվեստի պատմության միջով, եթե անգամ՝ անտեսանելի: Հայ կերպարվեստում եզակի, այն էլ էսթետիզացված (օրինակ՝ Վ. Սուրենյանց), բացառություններով, «ցավի» կամ «սարսափի» գեղագիտություն չի ձևավորվել, անգամ Եղեռնի թեմայի շրջանակներում: Արվեստաբանները դա բացատրում են հայ կերպարվեստի լավատեսական, պոզիտիվ բնույթով, անցողիկ իրականությունը փիլիսոփայորեն ընդհանրացնելու հատկությամբ (Սարյան, Կալենց, Գորկի, շատ ուրիշներ): Իսկ միգուցե՝ ցավալին շրջանցելու ու լռության մատնելու՞ միտում կա

դրանում թաքնված… Ակնարկենք, որ արհավիրքը վերապրածի լռության խնդիրը վերին աստիճանի նրբանկատորեն և այլաբանորեն արծարծեց այդ ժամանակ Սահակ Պողոսյանն իր «Մեծ մորս աչքերի լռությունը» իր նախագիծ-ինստալյացիայում՝ ներկայացված նույնպես Գաֆեսճեան արվեստի կենտրոնում: Եղեռնից 100 տարի անց միայն մենք սկսեցինք խոսել ցավը պատկերելու խնդիրների և արհավիրքը վերապրածների լռության մասին. իրենք չէին խոսում այդ մասին, թաքցնում էին, ամաչում էին, ուզում էին մոռանալ… Հոգեբանության տեսանկյունից դա հետտրավմատիկ սինդրոմի հետևանք է, և դա պետք է հասկանալ և այսօր, արցախյան պատերազմի համատեքստում: Հրաշալի է, երբ այն դուրս է մղվում այնքան արտիստիկ, գեղեցիկ ու բարի ձևով, ինչպես Արեգի ու Էդիկի նախագիծն է: Արվեստի թերապևտիկ էֆեկտն անկասկած է, և այստեղ պատերազմներն ապրած թե՛ արվեստագետ-հեղինակները, թե՛ պատերազմից տուժած նախագծի հերոսները, ովքեր, ի պատիվ իրենց, համաձայնել են նկարահանվել, նույն հարթության վրա են, ֆոտոխցիկն իրենց չի տարանջատում կամ ստորադասում: Արեգն ու Էդիկը շատ կարևոր, նաև թերապևտիկ, առաքելություն կատարեցին նաև այս առումով՝ իրենք խոսեցրին և հանրությանը ներկայացրին պատերազմի հետևանքները կրող մարդկանց, իրենց ձայնն ու խնդիրները լսելի դարձրին:

Վիգեն Գալստյանը նախագծի պատկերագրքի իր ներածականում միանգամայն տեղին հարցադրում է կատարում. ժամանակակից հայ արվեստագետները արցախյան թեմային զարմանալիորեն չեն անդրադարձել: Բայց նկատենք, որ արցախյան ազատամարտի թեման լավագույնս արծարծվել է լուսանկարչության մեջ՝ Ռուբեն Մանգասարյանը, Հակոբ Պողոսյանը, Մաքս Սիվասլյանը, Զավեն Խաչիկյանը, Հրայր Բազեն, Հակոբ Բերբերյանը, Մարտին Շահբազյանը և ուրիշներ վավերագրել են արցախյան պատերազմը հենց մարտական գործողությունների ժամանակ, իրենց ներդրումն այդ գործում հերոսություն է, նաև՝ մշակութային հերոսություն: Ամենայն հավանականությամբ, արցախյան թեման լայն

արձագանք չի ստացել վերազգային ժամանակակից արվեստի շրջանակում, քանի որ այն միակողմանիորեն կապվել է ազգայնական-իշխանական դիսկուրսի հետ: Վերջինս առավելապես զբաղված էր ինքնափնտրտուքով, ինչը և ժամանակակից արվեստի հատկանիշներից մեկն է: Բայց կա և արցախյան դիսկուրսի և առհասարակ պատերազմի մեկնաբանման այլ դիտակետ: Արժե նշել այն բացառիկ ժամանակակից հայ արվեստագետներին, ովքեր, այնուամենայնիվ, արցախյան պատերազմի թեմային անդրադարձել են:

Մենք միշտ կհիշենք վաղամեռիկ Սաշին՝ մայոր Ալեքսանդր Մելքոնյանին, ով Արցախյան ազատամարտի մասնակից էր, իսկ կարճատև դադարների ժամանակ, երբ հայտնվում էր քաղաքում, մի ցնդած բան անպայման անում էր ու իր խրոխտ ձայնով թնդացնում մեր սառած, մրոտ, կիսաքաղց գոյությունը: 1996 թ. գարնանը ԱԴՐԻ-ի (առմյանսկիյ դոմ ռաբոտնիկով իսկուսստվա) դահլիճում, որն այն ժամանակ պատկանում էր Արմեն Մազմանյանի ԳՈՅԱԿ ընկերությանը, Սաշը իրականացրեց մի հզոր ռազմամշակութային ակցիա-ինստալյացիա, որի ժամանակ այդ խորհրդային սյունազարդ ինտերիերն ամբողջությամբ պատեց կամուֆլյաժ ցանցով ու վրան ցուցադրեց իր գործերը…Սաշի նկարների հերոսները մասամբ նեոլիթյան ժայռապատկերների, մասամբ անտիկ առասպելական և կամ նկարչի երևակայության մեջ սինթեզված կերպարներ են՝ նետաձիգը, կենտավրոսը, զինվորը, որսորդը… Սաշը քննադատ-գաղափարախոս էր, բացառիկ մտավորական, ոչ թե ուռա-հայրենասեր, բայց անուղղելի ռոմանտիկ էր… Նա Հայաստանի ժամանակակից արվեստում առաջին ու ամենակարևոր միլիթըրի-արթի հեղինակն էր ու ինքը՝ ազատամարտիկ:

2012 թ. Շուշիում կայացած «Շուշի արթ փրոջեքթ» ժամանակակից արվեստի փառատոնը Հայաստանի ժամանակակից արվեստում մի շրջադարձային փուլ դարձավ ոչ միայն այն արցախյան տարածք ներմուծելու, այլ ժամանակակից արվեստի լեզվով արցախյան թեման և հետպատերազմյան իրականությունը վերաիմաստավորելու առումով: Այդ թեմայի շուրջ

աշխատող լուսանկարիչ Գերման Ավագյանն իր «Մահից հետո ծնվածները» ֆոտոնախագիծն առաջին անգամ ցուցադրեց հենց այդ փառատոնի ժամանակ: Զավակները ձեռքերում են պահում մարտի դաշտում զոհված իրենց հայրերի լուսանկարները, որոնց իրենք միայն այդ լուսանկարներով են ճանաչում: Գերմանը գտավ հետպատերազմյան տրավմաների, պատերազմի հետևանքների, տուժածների առողջական, սոցիալ-հոգեբանական և իրավական խնդիրների՝ օրակարգ բերելու եղանակը և թեման ներկայացնելու իր ուրույն լեզուն ու կարծես կանոնիկ դարձած «պատկերագրությունը». դիմային դիրքով հերոսը ձեռքին բռնած է թեման բացահայտող որևէ խորհրդանշական ատրիբուտ (իր ծնվելուց ամիսներ առաջ մարտի դաշտում զոհված հոր դիմանկարը, կինը՝ անհայտ կորած ամուսնու շապիկը կամ լուսանկարը կամ հենց պատերազմի հետևանքով անդամալույծ դարձած հերոսը, ով չի ամաչում իր խաթարված մարմինը ցուցադրելուց): Հիշենք Գերման Ավագյանի «Մահաբեր խաղալիքներ» նախագիծը, որն իրականացվել է «Հալո թրասթի» օժանդակությամբ և վերածվել քարոզչական-լուսավորչական լուրջ նախաձեռնության, և որի արդյունքում սահմանամերձ տարածքների բազմաթիվ երեխաների դեռ հնարավոր եղավ փրկել չպայթած ռումբերից: Իսկ նրա «Կինը սպասում է» նախագիծը պատմում է պատերազմի հետևանքով անհայտ կորած ամուսինների և իրենց սպասող կանանց մասին: Ինչ-որ իմաստով, Արեգի ու Էդիկի խիզախումը չէր լինի, եթե չլինեին այս գործերը, գուցե ոչ բառիս բուն և ուղիղ իմաստով, այլ՝ պատմական: Նաև հպարտությամբ և երախտագիտությամբ եմ ուզում նշել, որ Արեգը «Շուշի արթ փրոջեքթի» ողջ ընթացքում մեր կողքին էր, և նրա շնորհիվ այսօր ունենք այդ պատմական իրադարձության ֆոտովավերագրությունը: Կարծում եմ, որ դա նաև ժամանակակից արվեստի հարուստ դպրոց էր Արեգի համար:

Չի կարելի մոռանալ և Սյունիքի անառիկ ոգին մարմնավորող Աշոտ Ավագյանին, ում ստեղծագործության առանցքը նույնպես հնադարյան արքետիպերն են՝ Ուխտասարի ժայռապատկերներից մինչև Զորաց քարեր: «Շուշի արթ փրոջեքթի» շրջանակներում Ա. Ավագյանը մեգալիթյան տիպի զոհասեղան-ինստալյացիա կառուցեց Շուշիի հայտնի

պատմահնագիտական վայր Հունոտի կիրճում, և շրջանաձև շարված քարերի կենտրոնում, կրակարանի մեջ, իբրև ծիսական զոհաբերություն,, իրականացրեց իր կտավներից մեկի այրման ակցիան՝ ի հիշատակ Շուշիի ազատագրման ժամանակ զոհված ազատամարտիկների: Արվեստագետն ինքը արցախյան ազատամարտի մասնակից է եղել, և նրա համար ռազմի և արվեստի հանդիպումը սեփական կենսագրությունից է հառնում: Աշոտն անդրադարձավ նաև ապրիլյան պատերազմին, երբ 2017 թ. հոկտեմբերի 27-ին «Սարգիս Մուրադյան» պատկերասրահում բացեց ««Բոզի կալգոտկա» դիրքեր» ցուցահանդեսը: Ներկայացվող առարկաներն ու տեքստային նյութերն իրական են՝ վերցված հենց նշված զորամասից, ռազմական գործողություններից հետո: Ինչպես ասվում է ցուցահանդեսի անոտացիոն տեքստում, «Աշոտը ցանկացել է ներկայացնել պատերազմն այնպես, ինչպես այն կա՝ հնարավորինս քիչ միջամտելով դրան»: Եթե իր այդ «ռեալիթի» սկզբունքով նա մոտ է Էդիկի մոտեցմանը, ապա նեոլիթյան մշակույթի արքետիպերը մերօրյա պատերազմի հետ զուգակցելը հարազատ է Սաշի ստեղծագործությանը:

Ի տարբերություն նրանց, Սահակ Պողոսյանը լեզվական բառախաղերի միջոցով է արտահայտում արցախյան խնդիրը, իբրև արքետիպ ընդունելով ոչ թե հնադարյան մշակութային նշաններ, այլ մերօրյա զանգվածային մշակույթի տարրեր: «Շուշի արթ փրոջեքթի» շրջանակներում նա ներկայացրեց «Ականապատված դաշտեր և պեչենու բաղեր» ինստալյացիան, որը վեր հանեց արցախյան ողջ աշխարհաքաղաքական դիսկուրսը մի պարզ ու հեգնական բանաձևի միջոցով՝ այն յուրաքանչյուրի և աշխարհի ոտքի տակ դրված անտեսանելի ռումբ է, որը մի օր կպայթի բախտի քմահաճույքի բերմամբ: Սահակը Շուշիի ամրոցի մոտակայքի մի բացատում շարել էր չինական բախտի թխվածքաբլիթի տեսքով այդ «ռումբերը»՝ երևանյան սլենգով ասած՝ պեչենու բաղեր սարքել, ու դրանով ամեն ինչ ասել… Բանակցությունները աբսուրդի հասցնելը, խոսքը կտուրը գցելը, փակուղու առջև հայտնվելը «պեչենու բաղերի» հոմանիշներն են, իսկ ժողովրդական լեզուն, ինչպես գիտենք, սրից էլ սուր է:

Երկու տաղանդավոր արվեստագետներ Արեգ Բալայանն ու Էդիկ Պողոսյանը շարունակեցին Հայաստանի ժամանակակից արվեստի՝ հիշատակված ու արդեն դասական դարձած հեղինակների նախանշած ուղին, ու իրենք մի նոր շրջադարձ նախանշեցին արցախյան պատերազմի թեման արվեստի լեզվով վերաիմաստավորելու կարևորագույն գործում:

Լիլիթ Սարգսյան
Գլխավոր լուսանկարը՝ Հրայր Սարգսյանի
Լուսանկարները՝ Էդուարդ Թադևոսյանի, Արմեն Խաչատրյանի

Electronic media (in English)

The Guardian

Published on February 12, 2020

https://www.theguardian.com/artanddesign/gallery/2020/feb/12/rocks-rivers-and-roadside-prayers-lensculture-exposure-awards-2020-in-pictures?page=with%3Aimg-7

Rocks, rivers and roadside prayers: LensCulture Exposure awards – in pictures

Areg Balayan (Finalist): Consequence - Artefact: Areg Balayan and his colleague Edik Boghosian search for and select materials related to the Nagorno-Karabakh conflict in the South Caucasus, and transform them into works of art. Areg Balayan writes: Aro has been through all sorts of trouble. In 1990, he was shot by a sniper. In February 1992, he was wounded by a mortar round. Then, a few months later on August 20, he and his squad were ambushed. He says that except for one place, there is not a single intact spot on his body. He no longer works.

LensCulture

Published on February 11, 2020

https://www.lensculture.com/2020-lensculture-exposure-award-winners?modal=areg-balayan-the-winner-of-exposure-awards-2020

CIVILNET

Published on February 14, 2020

https://www.civilnet.am/news/2020/02/14/%E2%80%9CConsequence-Artefact-%E2%80%9D-a-Story-of-Humans-and-War/376413

"Consequence: Artefact," a story of humans and war



Consequence: Artefact is the artistic result of Areg Balayan, Edik Boghosian add Hrayr Sargsyan's work.

Their exhibition tells an alternative story of the Nagorno-Karabakh conflict.

For more than a year, Edik and Areg worked on human stories and material examples related to the ongoing conflict between Armenia, the Nagorno-Karabakh region and Azerbaijan. Each of them finally transformed them into a piece of art.

Hrayr Sargsyan, a documentary director, captured the whole process through his camera lense, to make a movie recounting the path they've been through and that resulted in the exhibition.

"Consequence: Artefact" will run until February 28 at the Artist's Union of Armenia in Yerevan.